է Սուրաթի մէջ Յովհաննէս վրդ. Սպահանցիին 1696ին յօրինած Դիրք Սրբազնագործութեան կամ Ճաշակեցիք խորագրով երկասիրութիւնը։

ՊԵՏՐՈՍ ԵՊՍ. ԱԴՈՒԼԵՑԻ (ԴՈՂԹՆ).— Մբ. Ս. Էջմիածնի. վանահայր Ադուլիսի Ս. Թովմայի վանքին, 1654ին եպս. կը ձեռնադրուի և կը յաջորդէ Խաչատուր եպս.ին որ իր հօր եղբայրն էր. 1668ին կը նորոգէ Ս. Թովմայի վանքը եւ կ'ընդարձակէ անոր պարիսպը։ 1680 Դեկտ. 15ին Ադուլեաց վանքէն կը մեկնի Վրաց Տովլաթ խանի պաշտօնական գիրովը և կ'այցելէ Երուսաղէմ։ Պետրոս եպս. Ս. Յակոբի վանքին մէջ իբր նախագահ պատուիրակութեան կը ներկայանայ Եղիազար կթղ.ին և կը հրաւիրէ զայն ամենայն հայոց կաթողիկոսութեան։ Եղիազար կթղ. պատուիրակութեան հետ 1682 Օգս. 30ին կը ժամանէ Էջմիածին և կը գահակալէ։ Պետրոս եպս. 1682ին վախճանած է Երնջակի Ս. Կարապետի վանքին մէջ (Ն. Երնջակի. էջ 209—210. Ժպկ. Հաս. Ա. էջ 402)։ Ս. Էջմիածնի միաբանութեան հրաւիրագրին պատճէնը (տե՛ս Արծրունեան. էջ 50)։

ՊԵՏՐՈՍ ԵՊՍ. ՍԱՐԱՃԵԱՆ, ՍԻՎՐԻՀԻՍԱՐՑԻ.— Մբ. Ծ. 1872ին. աչկ. Ժառ. Վարժ.ի 1891ին. Ջռ. 1898ին. Առ. Կիպրոսի (1899—1905). տեսուչ Ժառ. Վարժ.ի (1905—1908). ՏՊ. (1909—1910). 1913ին կը հրաժարի Միաբանութենէն. կը ձեռնադրուի եպս. Սսոյ մէջ 1914ին, Սսէն կը տարագրուի միաբանակիցներով Ս. Յակոբի վանքը 1915ին. անդամ Սինոդի (1916—17). Առ. Դամասկոսի (1918—1919). Առ. Հաճնոյ 1920ին. բ. անգամ Առ. Կիպրոսի 1921էն սկսեալ մինչև ցայժմ կը վարէ նոյն պաշտօնը. արքեպս. 1924ին։

ՊԵՏՐՈՍ ԵՐԷՑ.— ՄՁ. Թ. 697 ձեռագրին մէջ ունի հետևեալ յիշատակագրութիւնը. «Դարձեալ յիշեցէք ի բարի զսուտանուն Պետրոս երէցս և զամուսին իմ զԱալըզատէն, և զորդին իմ զԱստուածատուրն, զդուստրն իմ զԱավետերումն, զՏալիթէն, ամէն։ Դարձեալ ես մեղապարտս... երէցս ստացայ զհայր Մաշտոցս ի հալալ ընչից իմոց և հատու ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, ի պարծանս հայոց ազգի... ի թվին ՌԿԴ (=1615) ամին ի յառաջնորդութեան վանից տէր Գրիգոր Արքեպիսկոպոսին... յիշեցէք ի բարի զսուտանուն Պետրոս ե-